

## ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԱՍՏՈՒԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Սուրբ Ծննդեան Տօնին օրը, Չորեքշաբթի, Յունուար 6ին, Առաջնորդարանի Գալայճեան Սրահին մէջ թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Ս. Յովնան Արք. Տէրտէրեանի հանդիսապետութեամբ, Առաջնորդանիստ Մայր Տաճարի Խաչատուրեան Դպրաց Դաս Երգչախումբը կատարեց ժամերգութիւն: Արարողութեան մասնակցեցան Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Դոգշ. Ս. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան, Ծուխին Դոգելոր Դովիւ՝ Արժ. Ս. Խաժակ Քինյ. Շահպազեան, Արժ. Արժ. Ս. Աւետիս Քինյ. Աբովեան, Արժ. Ս. Ներսէս Քինյ. Դայրապետեան եւ Արժ. Ս. Յարութիւն Քինյ. Թաշճեան:

Առաւօտեան ժամը 11:00ին Սրբազան Դայրը հոգելորականներու եւ սարկաւազներու թափօրով եւ Առաջնորդանիստ Մայր Տաճարի Խաչատուրեան Դպրաց Դաս Երգչախումբի կողմէ «*Չրաշափառ*» շարականի երգեցողութեամբ առաջնորդուեցաւ դէպի Գալայճեան Սրահ, ուր մատոյց Սուրբ Ծննդեան Սուրբ Պատարագը: Սուրբ Սեղանին սպասարկեցին Արժ. Ս. Խաժակ Քինյ. Շահպազեան, Արժ. Ս. Աւետիս Քինյ. Աբովեան, Արժ. Ս. Ներսէս Քինյ. Դայրապետեան, քահանայութեան թեկնածու սարկաւազներ եւ Ծուխի սարկաւազները: Խաչատուրեան Դպրաց Դաս Երգչախումբը Բրշ. Ստեփան Սրկ. Կեօզիւմեանի խմբավարութեամբ եւ երգեհոնահարութեամբ Կիսասարկաւազ Դանիէլ Ագարակեանի, ներդաշնակ երգեցողութեամբ կատարեց իր բաժինը:

Արարողութեան ներկայ էին թեմական Խորհուրդի Ատենապետ՝ Իրաւաբան Տիար Յովսէփ Կանիմեան, Դայաստանի Դանրապետութեան Գլխաւոր Դիւպատոս՝ Տիար Գրիգոր Յովհաննիսեան, Միջ-Եկեղեցական յարաբերութեանց հոգելորականներէն Դայր Ալէքսի Սմիթ՝ ներկայացուցիչը Լոս Անճելըսի Կաթոլիկ Եկեղեցւոյ Առաջնորդ Կարտինալ Ռաճըր Մահոնիի եւ Շաքիլ Սիտ՝ Լոս Անճելըսի Դոգելոր Պետերու Խորհուրդի Նախագահը եւ Շուր Իսլամական Խորհուրդի Վարիչ Տնօրէնը: Սրբազան Դայրը ողջունեց անոնց ներկայութիւնը:

Սուրբ Ծննդեան Տօնին առթիւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Դայոց Կաթողիկոսը շնորհաւորական պատգամ մը դրկած էր Առաջնորդ Սրբազան Դօր:

Սրբազան Դայրը ներկաներուն ուղղեց իր Սուրբ Ծննդեան Պատգամը, բարեմաղթութիւններ կատարեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անասանութեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի արեւշատութեան, ինչպէս նաեւ Նուիրապետական միւս Աթոռներու գահակալներուն համար: Գնահատեց Առաջնորդանիստ Մայր Տաճարի Խաչատուրեան Դպրաց Դասին մատուցած ծառայութիւնները թեմէն ներս եւ յարատեւ յաջողութիւն մաղթեց իրենց:

Սրբազան Դայրը իր քարոզին մէջ ըսաւ. «*Դայ Քրիստոնեայի համար Քրիստոսի Սուրբ Ծնունդը տօնախմբելը վաւերական է Սուրբ Էջմիածնի Խորհուրդին առջեւ խոնարհունով, քանզի Տիրոջ Ծնունդը հայ մարդը կատարելապէս ըմբռնեց իր պապեանական հողին վրայ տեսնելով Միածնի էջըը, ուր կառուցուեցաւ առաջին կաթողիկէ Եկեղեցին՝ Սուրբ Էջմիածինը, անոր տալով բարոյական արդար իրաւունքը՝ Դայոց. Եկեղեցւոյ Մայր Կեդրոնը դառնալու, հանգամանք մը, որ անփոխարինելի է Սուրբ Էջմիածնի նկարագիրն ու հանգամանքը հաստատող: Դայ Քրիստոնեայի համար Յիսուս Քրիստոսի Ծնունդը ապրիլ կը նշանակէ Փրկչի Ծնունդին մէջ տեսնել իր հոգելոր կեանքի վերածնունդը: Ամէն անգամ երբ տօնախմբենք Յիսուսի Ծնունդը, խորքին մէջ ո՛չ միայն կը խոնարհինք Աստուածայայտնութեան մեծ խորհուրդին առջեւ, այլեւ Անոր Ծնունդը կը դարձնենք մեր կեանքին Արմատը: Անոր Ծնունդին մէջ մենք կը տեսնենք մարդկութեան ծնունդը, նոր աշխարհի ծնունդը, Խաղաղութեան Կոչը, բարիին ու զեղեցիկին առաջնորդող Աստղը, մեր մայր երկիրը վերածննդեան առաջնորդող ճանապարհը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դէպի երկինք տանող Ոսկի Կամուրջը»:*

Պատարագի ընթացքին Սրբազան Դայրը նաեւ կատարեց Առաջնորդանիստ Մայր տաճարի հետեւեալ Կնքահայրերու Խաչքարներուն Օծումը.-

Տէր եւ Տիկին Ռէյ Յարթունեանի, Տէր եւ Տիկին Ռիչըրտ եւ Էյլին Նահիկեանի, Փօլ եւ Մարիա-Նա Սաթամեանի, եւ Տէր եւ Տիկին Կարօ եւ Աղաւնի Գուրեանի: Սրբազան Դայրը գնահատեց անոնց ունեցած քրիստոնէական ազնիւ ոգին եւ օրհնեց գիրենք:

Սուրբ Պատարագի աւարտին Սրբազան Դօր հանդիսապետութեամբ կատարուեցաւ Ջրօրհնէքի Արարողութիւնը: Խաչի Կնքահայրն էր Լոս Անճելըսի մէջ պաշտօնավարող Դայաստանի Դանրապետութեան Գլխաւոր Դիւպատոս՝ Մեծայարգ Տիար Գրիգոր Յովհաննիսեան, որ արժանացաւ Սրբազան Դօր օրհնութիւններուն:

Ապա, Երգչախումբը «*Խորհուրդ Մեծ*» շարականի երգեցողութեամբ, Սրբազան Դայրը թափօրով առաջնորդուեցաւ դէպի Արմէն եւ Կլորիա Դամբար Դահլիճը, ուր ողջունեց ներկայութիւնը

Հայաստանի Հանրապետության Գլխավոր Հիւպատոսին, Թեմական Խորուրդի Ատենապետ՝ Իրաւաբան Տիար Յովսէփ Կանիմեանին, Մայր Տաճարի նոր կնքահայրերուն եւ հաւատացեալներուն շնորհաւորելով անգամ մը եւս մեր Փրկչին Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծնունդը: Ապա տեղի ունեցաւ հիւրասիրութիւն: